ՆՈՐԱՀԱՅՏ ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ-ՌՈՒՍ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(Ռուսական բժշկագիտության դպրոցի հայ առաջին սաները)

ԺՈՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայ-ռուսական բժշկական կապերը, որոնք սկզբնավորվել են դեռևս XI—XII դդ.[1]*, աննախընթաց աշխուժացում ապրեցին XIX դ. երկրորդ քառորդից սկսած՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց անմիջապես հետո։*

Բազմաթիվ հայ բժիշկներ մասնագիտական կրթություն ստանալով ռուսական բժշկական կենտրոններում, հիմնականում Մոսկվայի համալսարանում և Պետերբուրգի բժշկավիրաբուժական (հետագայում՝ ռազմաբժշկական) ակադեմիայում, արգասավոր գործունեություն ծավալեցին ու աչքի ընկան ոչ միայն պրակտիկ բժշկության ասպարեզում, այլև գիտական լուրջ հետազոտություններով նշանակալի հետք թողեցին բժշկագիտության պատմության մեջ։ Բավական է նշել, որ XIX դ. և XX դ. սկզբում (մինչև 1917 թ.) ռուսական բարձրագույն ուսումնական հաստատություններում մասնագիտական կրթություն ստացան շուրջ հազար հայ բժիշկ, իսկ նրանցից 67-ը հաջողությամբ պաշտպանեցին դոկտորական դիսերտացիա և արժանացան բժշկագիտության դոկտորի գիտական աստիճանի[2]*։*

Ռուսաստանի բարձրագույն հաստատություններում հայ բժիշկների ուսումնառության գործի սկիզբը համարվում է 1803 թ.։ Հայտնի է, որ այդ թվականին Մոսկվայի կայսերական համալսարանի բժշկական ֆակուլտետն է ընդունվել «հայ երիտասարդության առաջին ներկայացուցիչը»[3]*, Անդրկովկասում հայտնի բժիշկ, թիֆլիսաբնակ Թաթուլի որդին։*

Քիչ ավելի ուշ, 1807 թ. հունվարի 30-ին, հայ նշանավոր բժիշկ Ստեփաննոս Շահրիմանյանը, որը դեռևս նախորդ դարի վերջերին ավարտել էր Պադուայի համալսարանի բժշկական ֆակուլտետը, Ռուսաստանում ընդուն-

---

[1] Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. 2, Ереван, 1946, стр. 66—70; В. Рихтер, История медицины в России, ч. I, М., 1814, стр. 171—173; Ф. Л. Герман, Врачебный быт До-Петровской Руси, Харьков, вып. 1, 1891, стр. 14.

[2] А. А. Лалаян, Русско-армянские медицинские связи (автореферат докторской диссертации, Ереван, 1966, стр. 8—9).

[3] *Ա. Ա. Լալայան, Հայաստանում Ի. Պ. Պավլովի ուսմունքի տարածման պատմությունից, Երևան, 1954, էջ 3—4,* А. А. Лалаян, Первая медицинская книга, переведенная с армянского языка на русский («Советское здравоохранение», 1958, № 6, стр. 50). *Ռ. Ս. Փարսադանյան, Հայ բժշկության պատմությունից, Երևան, 1958, էջ 15—16;* Р. С. Парсадаиян, Прогрессивные традиции армянской медицины в охране здоровья народа (автореферат кандидатской диссертации, Ереван, 1960, стр. 7); Р. С. Парсадаиян, История здравоохранения Армении (автореферат докторской диссертации, Ереван, 1966, стр. 16); *Ռ. Ս. Փարսադանյան, Հայաստանի առողջապահության պատմություն (1828—1965 թթ.), Երևան, 1973, էջ 23։*

ված կարգի համաձայն, քննություններ է հանձնում Մոսկվայի համալսարանում և բժշկությամբ զբաղվելու իրավունք ստանում[4]։

1824 թ. հայ բժիշկներից առաջինը բժշկագիտության դոկտորի գիտական աստիճան է ստանում Սողոմոն Արտեմի Տեր-Ղուկասովը[5], որի ուսումնասիրությունը, ի դեպ, վեներաբանությանը վերաբերող առաջին դիսերտացիան էր Ռուսաստանում[6]։ Ս. Տեր-Ղուկասովը, որը 1819—1823 թթ. սովորել և գերազանց առաջադիմությամբ ավարտել էր Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը[7], փաստորեն, ըստ մինչ այժմ հայտնի տվյալների[8], նաև հայ առաջին բժիշկն էր, որ մասնագիտական կրթություն էր ստացել Ռուսաստանում։ Այս առնչությամբ հետաքրքիր են Մաշտոցի անվան Մատենադարանի Լազարյանների արխիվում պահվող այն չորս նամակները, որոնք հրապարակվում են ստորև։ Այդ վավերագրերից պարզվում է, որ բժիշկ Ս. Տեր-Ղուկասովից շատ առաջ Ռուսաստանում բարձրագույն մասնագիտական կրթություն է ստացել մեկ ուրիշ հայ բժիշկ՝ Սողոմոն Հարությունի Ակիմովը, որը դեռևս 1802 թ. ընդունվել է Պետերբուրգի բժշկավիրաբուժական ակադեմիան և հաջողությամբ ավարտել 1808 թ.։ Այսպիսով, Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում հայ բժիշկների ուսումնառության գործի սկիզբը պետք է համարել ոչ թե 1803 թ., այլ 1802 թ.։

Պետերբուրգի բժշկավիրաբուժական ակադեմիայի շրջանավարտների ժամանակագրական անվանացուցակից պարզվում է, որ Սողոմոն Ակիմովը 1808 թ. այն 80 շրջանավարտներից էր, որոնք հաջողությամբ ավարտելով ակադեմիայի լրիվ դասընթացը, արժանացան վիրաբուժության թեկնածուի կոչման[9]։ Երկու տարի անց Սողոմոն Ակիմովն արդեն որպես բժիշկ հիշատակվում է ամենամյա «Ռուսական բժշկական անվանացանկում»[10]։ Եթե նկատի ունենանք, որ բժշկի կոչում ստանալու համար վիրաբուժության թեկնածուն, ակադեմիան ավարտելուց հետո, պարտավոր էր մեկ տարի աշխատել զինվորական հոսպիտալում[11], ապա պետք է ենթադրել, որ Ս. Ակիմովը բժշկի կոչումը ստացել է 1809 թ.։

---

4 А. А. Л а л а я н, Русско-армянские медицинские связи, стр. 8.

5 А. А. Л а л а я н, К истории развития учения И. П. Павлова в Армении (автореферат кандидатской диссертации, Ереван, 1952, стр. 5); е г о ж е, Русско-армянские медицинские связи, стр. 10.

6 Е. Д. А ш у р к о в, Л. А. Ш т е й н л у х т, Краткий очерк истории отечественной венерологии («Многотомное руководство по дермато-венерологии», т. I, М., 1959, стр. 13).

7 Л. Ф. З м е е в, Словарь врачей, получивших степень доктора медицины (и хир.) в Императорском Московском университете (до 1863 г.), СПб., 1885, стр. 55—56; А. А. Л а л а я н, Докторские диссертации врачей-армян, защищенные в Московском университете в XIX веке («Известия» АН Арм. ССР (биол. и сельхоз. науки), 1955, № 5, стр. 97).

8 Ա. Կ ծ ո յ ա ն, 19-րդ դարի առաջին կեսի ռուսական բժշկագիտության առաջին հայ սաները (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 7, էջ 107—118), նաև՝ Ա. Ա. Լալայանի և Ռ. Ս. Փարսադանյանի վերը նշված աշխատությունները։

9 «История Императорской Военно-Медицинской (бывшей Медико-Хирургической) академии за сто лет (1798—1898)», Приложения, СПб., 1898, стр. 215—216.

10 «Российский медицинский список» на 1810 год», СПб., 1810, стр. 1.

11 «История Императорской Военно-Медицинской (бывшей Медико-хирургической) академии за сто лет (1798—1898)», стр. 122.

Կարծում ենք, որ հետագա որոնումները հնարավորություն կտան գոնե ընդհանուր գծերով ամբողջացնելու ռուսական բժշկագիտության դպրոցի հայ առաջին սանի կենսագրությունը։

1

Շքեղափառ և վեհազնեայ իշխան Աղայ Յովակիմ[12]
իմ բարերար տէր

Որովհետև պարտաւոր է ծառայ միշտ գտանիլ ի սպասու տեառն առ ձեռն պատրաստ յորմէ, թէ ելցէ հրաման իսկոյն կատարել, իսկ թէ ո՛չ մնալ ազատութեան նորա։

Նմին իրի նախ քան զայս քանիցս դիմեցի առ սպաս մեծի տեառնէ իմոյ յայգորել և մնայի ելման հրամանի ի պայծառափայլ իշխանէդ իմմէ, զի կատարեցից, բայց մինչ տեսի թողուլդ զիս յազատութեան ոչ ինչ հրամայելովդ դարձեալ որպէս զկամակատար ծառայ և զընդունօղ պարգևացդ գոհացայ զտեառնէդ իմմէ. երկայնամտելով, թէ գուցէ յայլ ինչ նուագի արժանաւորեցայց այնմ։

Թէպէտ չէր օրէն այս յինէն առ վեհազուն տէրդ իմ, սակայն յորժամ ողորմած էք ի վերայ եղբօր իմոյ, ահա նոյն և յիմ վերա վարկուցել համարձակիմ։

Լուեալ օգոստափառ և տիեզերակալ կայսերն Մեծի աղաչանաց բարեծնունդ բժիշկ Յարութիւն[13] բարեկամին մերոյ (զոր հասարակութիւն քա-

---

12 *Հովակիմ Լազարյան (1743—1826)—եղբոր՝ Հովհաննես Լազարյանի (1735—1801) կտակակատարը, Լազարյան ճեմարանի հիմնադիրը և առաջին հոգաբարձուն։*

13 *Հարություն Ակիմով—XVIII դ. վերջի և XIX դ. սկզբի Թիֆլիսաբնակ հայ նշանավոր բժիշկ, որի մասին հայ բժշկագիտության պատմությանը շատ քիչ բան է հայտնի։ Նրա անունը հիշատակված է հայոց Դավիթ կաթողիկոսի 1802 թ. սեպտեմբերի 28-ի թղթում, ուր վերջինս շնորհակալություն է հայտնում հեքիմբաշի Հարությունին իր եղբորը՝ պ. Բարսեղին, բուժելու համար և միաժամանակ խնդրում նրան գալ էջմիածին «անպատճառ վասն բժշկութեան և հարկաւորութեան... Աբրահամ վարդապետին...» («Դիւան Հայոց պատմութեան», գիրք 2, մասն 1, Թիֆլիս, 1904, էջ 592)։ Ինչպես ընդգծում է ակադեմիկոս Լ. Հովհաննիսյանը, բժիշկ Հարությունի հեքիմբաշի (ավագ կամ գլխավոր բժիշկ) կոչվելը խոսում է նրա շատ հմուտ և փորձառու լինելու մասին* (Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. 3, Ереван, 1946, стр. 184).

Բժիշկ Հարությունի վերաբերյալ կարևոր տեղեկություններ ենք քաղել վրաց գիտնականների աշխատություններից։ Այսպես, արխիվային մի փաստաթղթից պարզվում է, որ բժիշկ Հարությունը՝ Արութինը (իմա՝ Հովսեփ), որի հայրը նույնպես բժիշկ է եղել (այստեղից էլ հավանաբար Ակիմով՝ Հեքիմյան ազգանունը—Ժ. Մ.), դեռևս երիտասարդ հասակում մեկնել է Եվրոպա, «հաջողությամբ տիրապետել բժշկության արվեստին» և վերադառնալով Թիֆլիս մեծ ծառայություններ մատուցել ինչպես Հերակլ 2-րդին՝ անձամբ և Վրաստանի (իմա՝ Քարթլ—Կախեթի) բնակչությանը, այնպես էլ «հարևաններին՝ Իմերեթի թագավորությանն ու Ադրբեջանի խանությանը։ Եվ ահա այս ամենի, ինչպես նաև թագուհի Դարեջանին հաջողությամբ բուժելու համար Հերակլ 2-րդը, 1787 թ., «աղնվազարմ բժիշկ Արութինին» է նվիրել քաղաքի թաթարական հրապարակում գտնվող «դուքաններ»։ Ըստ Շ. Ա. Մեսխիայի, այդ հատուկ «դուքանները», որոնք կոչվում էին «բժշկական դուքաններ» կամ «բժիշկների գործարաններ» (заводы докторов) *հավանաբար ծառայում էին որպես հիվանդանոցներ, ուր պատրաստվում և վաճառվում էր նաև դեղորայք* (И. И. Никобадзе, И. Я. Татишвили, И. Б. Курчишвили, Основные этапы развития медицины в Грузии, Тбилиси, 1964, стр. 189; Ш. А. Месхиа, Города и городской строй феодальной Грузии (XVII—XVIII вв.), Тбилиси, 1959, стр. 424).

ղաքիս յորդորեաց աղաչել) հրամայեաց բարձու հրամանաւ գալ անդրանիկ և սիրելի որդւոյն իւրոյ այդր յունիվերսիթէթն բժշկական գիտութեան[14], *ուր և ուսանիլ զ՚հարկաւոր ուսանելիս յորքան ամս և իցէ բոլորովին ծախիւք Արքունւոյ, վասն որոյ ահա դիմեաց ի նոյն համալսարան միանգամայն և ի սպաս բարձր վեհաղնութեանցդ։*

Վասն որոյ հայցեմ ի բարեխնամ տեառնէդ իմմէ ունիլ ի վերայ տէր դշնորհս և զխնամս հայրական, մերթ մխիթարելով զպանդխտութիւն նորա և մերթ ուսուցանելով զդրուատեալ և զվայելչագոյն Ձերդ քաղաքավարութիւն, որում ոչ թուեալ զմեկուսանալն ի ծնողաց և զարգացեալ յերկաքանչիւր կրթութիւնս. այսինքն գիտութեանն մարզարանին և քաղաքավարութեան բարեկենցաղ վեհաղնութեանցդ, եղիցի յիշատակ բարի՛ տեառնդ մերոյ ի պիտոյանալն հասարակութեանս այսու և այնու բարեաւն շնորհազարդութեամբ, (որք) յաւէտ յետեալս եղեց մեծապես շնորհակալ զբազմողորմ տեառնէդ իմմէ, զտէր։

Ողջունեալ արդ մեծաւ խոնարհութեամբ յանձնեմ ի խնամս Արարչին հանդերձ համայն Ձերաղնովք, և մնամ սիրով քաղցր հրամանի մեծի տեառնդ իմում՝

որոյ եմ ամենախոնարհ ծառայ տէր Ղազար Լազրով[15],
սպասաւոր սրբոյ վանից։

ի 1802 ամի սեպտեմբերի
ևն ի Թիֆլիզ։

Թղթ. 102, գ. 6, վավ. 320։

2

Վեհազնեայ Իշխան Աղայ Յովակիմ
Ողորմածագունեղ տէր և բարերար

Խոնարհ ծառայութիւնս մատուցանելով յայտ առնեմ։ Բազմադիմի շնորհ և խնամ Ձերդ վեհազնութեանն, որ ի վերայ պանդուխտ որդւոյն իմոյ և ծառային Ձեր Սօլօմօնին ժամանակէ ի ժամանակ լսելով միշտ դոհացօղ եմ լեալ զբարերար անուանէ Ձերդ վեհազնութեանն ըստ որում ազգասիրական ջերմեռանդութեամբ միշտ հետեօղ էք վասն պայծառութեան ազգին Ձերոյ, զոր ինքն ամենաբարձրեալն Աստուած զպատուականագոյն կեանս Ձեր ընդերկայնաւորս արասցէ։

Վերջապէս լսելով ի գրութենէ որդւոյս և պարոն Աբելին, որ դուք իբրու հայրական սրտացաւութեամբ ներկայացուցանելով որդեակն իմ առ պայծառափայլ մինիստրն ունիք բաղձանս միջնորդութեամբ Ձերով երջանկացուցանել զնա և առնել մշտնջենական յիշատակ ի քաղաքիս[16] *ոչ դիտեմ, թէ որպիսի*

---

14 *Այսինքն՝ բժշկա-վիրաբուժական ակադեմիա, որը հիմնադրվել էր 1798 թ., և այդ տարիներին միակ բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունն էր Պետերբուրգում* («Юбилейный сборник Военно-Медицинской академии», Л., 1927, стр. 6).

15 *Ղազար Լազրով—Թիֆլիսի ս. Վանքի եկեղեցու ավագ քահանա։*

16 *Քանի որ այդ տարիներին Պետերբուրգի բժշկա-վիրաբուժական ակադեմիան գտնվում էր Ներքին գործոց մինիստրության գերատեսչության ներքո և «անմիջականորեն (ընդգծումը մերն է—Ժ. Մ.) ենթարկվում էր մինիստրին»* (Е. Н. Павловский, Военно-Медицинская академия Красной Армии им. С. М. Кирова за 140 лет (1798—1938), Л., 1940, стр. 6—7), *ապա պետք է ենթադրել, որ Հ. Լազարյանը միջնորդել է վերջինիս առջև նորավարտ Ս. Ակիմովին Թիֆլիս նշանակելու համար։*

գոհութիւնս և շնորհակալութիւնս մատուցից իրաւի մնամ ի բոլոր կեանս իմ պարտաւոր Ձերդ վեհազնութեան անմահ բարերարութեանն և խնդրեմ զայդ շնորհ և խնամ անպակաս առնիլ և այլն ունիմ պատիւ խորին ջերմեռանդ։

Մնալ Ձերդ վեհազնութեանն ամենախոնարհ ծառայ
Յարութիւն բժիշկ Ամեմով

Ի 1808 ապրիլի 25,
Թիֆլիզ

<Հ. Գ.> Վերջապես խնդրեմ և յերես անկեալ աղաչեմ փութով և փութով որդեակն իմ ճանապարհել յայս կողմն, որ հոգի իմ դորին գալստեանն սպասէ և որ ինչ ծախս լինի չէ փոյթ ունիմ ուրախութեամբ և շնորհակալութեամբ վճարել։

Թղթ. 104, գ. 8, վավ. 105։

3

Վեհազնեայ իշխան Աղայ Յովակիմ

Ողորմածագունեղ տէր

Բարերարին իմոյ և սիրական եղբօր ձեր վեհազնեայ իշխան Աղայ Մինաս Լազրեանին[17] անգին կենացն վաղճան արդարև թալկացոյց զսիրտ իմ և ի մտաբերելն իմ զնորին ազգասիրական ջերմեռանդութիւն ի վերայ կարօտեալ որդւոյս Սօլոմօնին ոչ կարեմ զսպել արտօսր աչաց իմոց. բիւրիցս աւաղեմք և ափսոսամք ընդ զրկումն յայնպիսւոյ բարերար իշխանէ։ Սակայն զինչ զօրեմք առնիլ, զի, որ ըստ Սողոմոնի միանգամ կնքեցաւ մահ ի վերայ մարդկայինս բնութեան, այլ ով կարէ եղծանել։ Ուրեմն, պատուական գլուխ ձեր ողջ կացցէ, հոգին սուրբ Աստուած մխիթարեսցէ զվշտագնեալ սիրտ ձեր և զնա հանգուսցէ ի լոյս երեսաց իւրոց։

Հաստատուն է յոյս մեր առ Աստուած, ով վեհազնեայ իշխան, թէպէտ ազգ գայ և ազգ գնայ, սակայն տունն Լազրեան յաւիտեան կայ։ Ակն ունիմք, զի ոչ թողուք զմեզ որբացեալս ի յազգասիրական շնորհաց ձեր, այլ հանապազ կացուցանել զմեզ պարտաւորս մեծի բարերարութեան ձերոյ յաւել քան զայս՝ մնամ խորին ջերմեռանդութեամբ։

Ողորմածագունեղ տէր
Ձերդ վեհազնութեանն

ամենախոնարհ ծառայ
բժիշկ Յարութիւն Ամիմով

Ի 1809 ամի
մարտի 20, Թիֆլիզ

Թղթ. 104, գ. 8, վավ. 108։

---

17 Մինաս Լազարյան—Հովհաննես և Հովակիմ Լազարյանների եղբայրը։ Մահացել է 1809 թ. հունվարի 18-ին, 72 տարեկան հասակում («Петербургский некрополь», т. 2, СПб., 1912, стр. 595).

4

Վեհազնեալ իշխանապետ Աղայ Յովակիմ

Ողորմածագունեղ տէր

Յառաջ քան զայս սաստուցեալ ունիմ զմխիթարական դրութիւնս, որ վասն օրհասի սիրելի եղբօրն ձեր և բարերար տեառն մերոյ վեհազնեալ իշխան Աղայ Սինաս Լազրեանին, որ արդարև ճմլեցոյց զսիրտ մեր մեծաւ կսկծանօք, որոյ զհոգին տէր լուսաւորեսցէ և պատուական դլուխ ձեր ողջ լիցի։

Ահա՛ որդեակն իմ և ծառայ ձեր Եսվանէն ներկայացուցի այդր, որ մտցէ ի յուսումնարանն և վարժեսցի յարհեստս բժշկականութեան։ Խոնարհաբար խնդրեմ յողորմած տեառնէդ, զի որպիսի խնամս և զշնորհս ունէիք դուք և հանդուցեալ եղբայրն ձեր Աղայ Սինասն ի վերայ տրդուոյս Սօլոմոնին զայնս վերաբերեսջիք նաև ի վերայ դորա։ Ըստ որում, անընտելէ վայրեացդ դրութեանն և այնու ունիք շնորհապարտ կացուցանել, զիս ի բոլոր կեանս իմ։ Յաւել քան զայս ի բոլոր սրտէ բաղձալով իմ ամենապատուական անձին ձեր առողջութեան։

Մնամ ողորմածագունեղ Տեառնդ
ամենախոնարհ ծառայ
Աֆիմով (....)

Ի 1809 մայիսի 25,
Թիֆլիզ

Թղթ. 104, գ. 8, վավ. 107։

НОВОВЫЯВЛЕННЫЕ МАТЕРИАЛЫ ПО ИСТОРИИ АРМЯНО-РУССКИХ МЕДИЦИНСКИХ СВЯЗЕЙ

(Первый питомец-армянин русской медицинской школы)

ЖОРА МАНУКЯН

Резюме

Армяно-русские медицинские связи, зародившиеся еще в XI—XII вв., небывало оживились начиная со второй четверти XIX века, сразу же после присоединения Восточной Армении к России.

Из публикуемых писем, хранящихся в фонде «Архив Лазарянов» в Матенадаране им. Маштоца (см.: папка 102, дело 6, док. 320; папка 104, дело 8, док. 105, 107 и 108, подлинники на армянском языке), становится известно, что еще в 1802 г. из Тифлиса приезжает в Петербург сын известного армянского врача Арутюна Акимова — Соломон Акимов, который поступает в Медико-Хирургическую (ныне Военно-Медицинскую) академию и успешно заканчивает ее в 1808 г.

Из печатных источников выяснено также, что Соломон Акимов в 1808 г. окончил полный курс Академии со званием кандидата хирургии, а через два года уже имел звание врача.

Следует отметить, что Соломон Арутюнович Акимов, фактически был первым из врачей-армян, получившим высшее медицинское образование в России.